

ՄԵՐ ՄԻԶՆԵԴՐՅԱՆ ԴՐԽՆԵՐԸ

Հնում «զրիչ» ասելով հասկանում էին ո՛չ թէ դրելու անշունչ գործեքը, այլ այն անձնավորությունը, որը գրում կամ ընդօրինակուած էր ձեռագիրը:

Անցյալում, տպագրության բացակայության պայմաններում, գրիչները չորհակալ գործ են կատարել ինչպես անցյալի մատենագրությունն արտագրելու, այնպես և եղած ստեղծագործական նոր արժեքներով լրացնելու և հարստացնելու ուղղությամբ։ Համարձակ կարելի է ասել, որ եթե մենք չունենայինք Կիլիկյան գրչության դպրոցները 12—13 դարերում, Սյունյաց գրչության դպրոցները 14—15 դարերում և միջնադարյան մեր մյուս գրչության դպրոցները, ապա մեր հին մատենագրությունը կորած կլիներ այնպես, ինչպես անհետ կորել է մեր հարեւան աղվանական ժողովրդի ողջ գրականությունը։ Մեր հին հայ հեղինակների ոչ մեկի ինքնագիրը (ավտոգրաֆը), ինչպես հայանի է, մեզ չի հասել։ Մենք չունենք, օրինակ, ո՛չ Խորենացու, ո՛չ Եղիշեի, ո՛չ Ղետոն Երեցի, և ո՛չ էլ մյուս որևէ հին հեղինակի ինքնագրերը։ Նրանց աշխատությունները մեզ հասել են ուշ շրջանի գրիչների ընդօրինակություններով և եթե Մինելին մեր գրիչները, բնական է, չէր հատնի և մեզ մեր հին մատենագրությունը։ Մյուս կողմից, եթե գրիչները մեր հին գրականությունը չհարստացնեին ստեղծագործական նոր արժեքներով, ապա մեր միջնադարյան գրականությունը չէր

ունենա այն փայլը, ինչպիսին ունի և երևում է մեզ այժմ։

Հայ մատենագրության ասպարեզում գրիչները, սակայն, կատարել են արեհքավոր մի այլ գործ, նրանք իրենց ընդօրինակած ձեռագրերում գրել և թողել են իրենց հիշատակարաններում և հիշատակագրությունները, որոնք մեծ արժեք են ներկայացնում գիտության համար։ Գրիչները իրենց հիշատակարաններում ու հիշատակագրություններում, սովորաբար, հաղորդում են հետաքրքրական տեղեկություններ արտադրության հանգամանքների, ժամանակի, գրչության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական դեպքերի և բաղմաթիվ այլ ինդիքների մասին, որոնք անգնահատելի նյութ են մեր պատմության և գրականության համար։ Հաճախ հիշատակարաններում եղած պատմական տեղեկություններն ավելի վաստակելի են, բազմակողմանի լուսաբանված և ճշմարտացի, քանի ավալ՝ պատմական իրադարձությունը նկարագրող մեզ հայտնի այս կամ այն պատմագրի տեղեկությունները։ Հիշատակարաններն իրենց ժամանակաշրջանը ճիշտ արտացոլող հայելիներն են։ Ուզո՞ւմ ես մոտից ուսումնասիրել գրչի ապրած էպոխան—թերթիր ձեռագրերի հիշատակարանները։

Ցավալի է ասել, որ հիշատակարանների և հիշատակագրությունների՝ պատմական այս կարեւոր սկզբնաղբյուրների վրա հայագիտության մեջ հարկ եղած ու-

շաղրությունը չի դարձել: Նրանցից քը-
չերն են հրատարակված, և հրատարակ-
վածները պահանջվող չափով դեռ չեն օգ-
տագործվում պատմական և բանասիրական
ուսումնագրությունների մեջ: Հիշատա-
կարանների վորքիկ ժողովածու հրատա-
րակել է միայն Փիրզակեմյանը իր «Նո-
տարք Հայոց»-ում: Մյուս հրատարակված
հիշատակարանները տեղափորված են գըլ-
խավորապես ձեռագրաց ցուցակներում (Հ.
Տաշյանի, Բ. Սարգսյանի, Ն. Մատի,
Ե. Լալայանի, Թոփչյանի, Ֆոնիքիսի, և
մյուսների) և համեմատական տեքստերի
առաջարաններում: Տասնյակ հազարավոր
հիշատակարաններ, հատկապես մեր և
երուսաղեմի մատենադարանների ձեռա-
գրերի հիշատակարանները, դեռ սպասում
են հրատարակության:

Հիշատակարաններն ուսումնագրու-
թյան նյութ են հանդիսանում բազմաթիվ
թեմաների համար: Այդ բոլորով մենք
այժմ նպատակ չունենք զբաղվել: Մեզ
հետաքրքրում է միայն մի խնդիր՝ ի՞նչ
պայմաններում են գրել և ընդօրինակել
մեր գրիչներն իրենց ձեռագրերը:

Հիշատակարանների ուսումնագրու-
թյունից ամենից առաջ պարզվում է, որ
գրիչների մեծ մասը հասարակ, պրոֆե-
սիոնալ գրչությամբ զբաղվող մարդիկ են
հանդիսացել: Գրչությունը նրանց մասնա-
գիտությունը, նրանց պրոֆեսիան է հան-
դիսացել: Այդ պրոֆեսիայով նրանք հա-
ճախ աշխատել են իրենց ողջ կյանքի ըն-
թացքում: Մեր մատենադարանում կան
բազմաթիվ ձեռագրեր, որոնց գրիչները
գրչության արվեստի մեջ զառամած ձե-
ռանքներ են:

ՀՍՍՌ Մատենադարանի № 4107 ձեռ-
ուագրի հիշատակարանից երկում է, որ
ձեռագրի գրելը քառասուն և երկու տարի
անդիւծառ գրչությամբ է զբաղվել,
գրելու մատը չորացած է եղել, աչքի
լույսը պահասած է, բայց գրելը համա-
ռությամբ շարունակել է իր գրչության
արվեստը. քայլու դիմեմք, —ասում է գրի-

չըն իր հիշատակարանում, — որ գիրդ բա-
ղում պակսութիւն կա և անթիւ թէպէտ որ
շատ կայ, մեր կարն այդչափ էր, ձեռու
կու դողայր և աչքս բնաւ չէր տեսնուլ,
գրչի մատն չորացած էր, միջի մատամբո
գրեցաք... ո՞հ դարդ իմ, հիմայ քառա-
սուն եւ երկու տարի է, որ մեր բանս այս
էր, ապա այսօր նման անդէալ չէր եղեալ,
խիստ կու ամաչեմ ի ձեզնէ, թողութիւն
արարէք, (թերթ 503):

Քսան և երկուերորդ տետրակից հետո
գրելը զնում է իր 42 տարվա աշխատանքի
վերջակետը. Նա մահանում է, և նրա աշ-
խատանքը շարունակում է իր աշակերտը:
Հունար գրելը, որը և թողել է իր փոք-
րիկ հիշատակարանը՝ իր ուսուցչի թողած
վաստակների և նրա մահվան մասին:

Հովհաննես գրելն իր 1458 թվին գրած
հիշատակարանում հայտնում է, որ ինքը
ծերացել է, հիվանդ է, աչքերը վատ են
տեսնում և գրեց դառն սրտով և հեծեծան-
քով. «աչքս ի լուսոյ էր պակասեալ եւ
կարողութիւնս <ի զօրութենէ> խա-
փանեալ...»: Հիշատակարանի վերջում նա
խնդրում է չմեղադրել իրեն տառերի խոշո-
րության և սխալերի համար, որովհետև
իր կարողությունն այդչափ էր, «անմեղա-
դիր լերուք խոշորութեան եւ սխալանաց
գրիս, դի կարն մեր այս էր»: (ՀՍՍՌ
Մատենադարան, № 5331):

Միիթար Անեցու 1338 թվին գրած
չափածո մի գեղեցիկ հիշատակարանից
երեսը է, որ նա ձեռագիրը գրել է ծեր
հասակում, դողացող ձեռքով: Եվ նրան,
որպես ծերունի մարդու, զղայնացրել է ա-
մեն ինչ՝ հիվանդությունը, թանաքի թանձ-
րանալը, ճանճերի գրչի վրա նստելը և
այլն:

Հիշատակարանում նա գրում է.
«Մեծ վստանքի կամ յայս մեղրու,
Զի խիստ յաղթեց ցաւն մարմարոյ,
Եւ ի ձեռացս դողալուս
Այլ չեմ կարիկ տալ շար գրոյս:
Եւս տառել ի յայս շողուս,
Ու քանաքիս քանձրանպուտ.

Եւ մամաւանդ ի յայս քնուս,
Զօր հասարակ մրափելուս:
Եւ յանձնեալ այս նամներուս,
Ի սնավաստկան կենդանուս,
Որ միշտ նատիմ ի վերայ գրչուս,
Ծրծեն գրանաբն գրերուս:
Կելնէ իմ սրտիս այս ոչնչուս,
Զգիտում՝ թէ ի՞նչ ամեն նզնվծնուս:
Հեշտակարանի վերջում Անեցին դեմում
է իր աշքերին, նրանցից լույս է
խնդրում, որպեսզի կարողանա գրերին
շար տալ և «գրչության նաւ»-ը ծովափի
հասցնի ամարտի ձեռագրի ընդօրինակու-
թյունը.

«Այլ երբ կու տաս իմ աչքս լուս,
Որ ես ալ շար տամ զբերուս:
Եղայր, մեղ մի՛ դյուէք գերուս,
Այս տառապեալ ողբամելուս,
Ինչ հմացաւ տարիք մարմնուս,
Պէսպէս ցաւեր յայտնի ծերուս:
Օ՛յս, թէ լիներ նար այս նաւուս,
Որ հասանելր յեզր ի ծովուս,
Որ տեսանեմ զլերջք գրուս...»
(ՀՍՍՌ Մատեն. № 4429):

Պրոֆեսիոնալ գրիչները հաճախ ըն-
դուք իմանալու, թե ո՞վ է հանդիսանալու
գրվող ձեռագրի պատմիրատում, գնողը:
Այդպիսի դեսպում նրանք վերջին հիշա-
տակարանում պատմիրատուի անվան տեղը
բաց են թողնում, որպեսզի ձեռագրի գը-
նողի անունը հետագայում գրեն այն տեղ:
Մենք մեր Մատենադարանում մի շարք
ձեռագրեր ունենք պատմիրատուի անունը
բաց թողած հիշատակարաններով:

Գրիչների մեծ մասը հասակավոր,
տարիքն առանձ մարդիկ են եղել, բայց մեկ
մեկ պատահում են և երիտասարդ, պա-
տանի գրիչներ: Այսպես օրինակ, Թոխա-
թում գրված գեղեցիկ գրչություն ունե-
ցող մի ձեռագրի գրիչը—12 տարեկան
պատանի է. «...դեռ եւ ժԲ (12) ամաց
գոյով... գրեալ եղեւ սա ի քաղաքն թո-
խաթ», —գրում է իր հիշատակարանում
պատանի գրիչը, (ՀՍՍՌ Մատ. № 843):

Պատահում են քիչ թվով նաև կին
գրիչներ՝ գրչուհիներ: Մեր Մատենադա-
րանի ձեռագրերից մեզ հայտնի են մի քա-
նի գրչուհիների անուններ՝ Հեղինե, Մար-
գարիտ, Եղիսաբեթ, Բրաբեոն, Մարիամ
և ուրիշները:

Գրիչների մեծ մասը, հատկապես նը-
րանք, ովքեր գրական «սև աշխատանք»
կատարող պրոֆեսիոնալ գրիչներ են, աշ-
խատել են նյութական սուղ պայմաննե-
րում:

1303 թվին գրած մի ձեռագրի գրիչ
հայտնում է, որ նա ձեռագրերը գրել է
աղքատ ու չքավոր սեղանով. «Գրեցի զա-
աղքատ եւ չքավոր սեղանով» (ՀՍՍՌ
Մատ. № 5568, թերթ 354 թ.):

Գրիչներն իրենց հիշատակարաններում
շատ են գանգատվում հատկապես բնակա-
րանային վատ: պայմանների; ճրադրությունի
պակասության, ձմեռը վառելափայտ չու-
նենալու և այլ դժվարությունների հա-
մար:

Թորոս գրիչն իր պատմիրատուկին՝
թաղավորին ուղղած հիշատակարանում
գրում է. «Եւ ես գլուխ, այս չէ թագա-
ւորական իրք, այլ ոսկեպիր պիտէը եւ
հարտաք գրչի եւ ես շատ պատճառ ունէի,
որ խափանէր զիս յայս ձեռնարկութիւնս
տկարութիւն եւ մութն իրծիթիս, եւ
հողմ պամարու փոշեխատն փշելով ընդ
պատուհանս. եւ պաղն օղոյս...» (ՀՍՍՌ
Մատեն. № 2544):

Սեփել Օհանը 1663 թ. գրած իր մի
ուսանալոր հիշատակարանում գանգատ-
վում է մթության և թղթի վատորակու-
թյան համար:—

«Հազար հարիւր երկու թութին,
Գանգատ ունենք մրագի մթին,
Այլ եւ յետոյ այս խամ թղթին,
Որ չի երթաք ենու իմ սրտին...
Աշուիրս է բաց, լուայ պակաս,
Գրիչը չերթաք ենու շար սողին,
Որմ է կազ եւ որն է կոր,
Թամաք սողի ի մէջ բարին:

(ՀՍՍՌ Մատեն. № 5623 թ. 224 թ.):

Մերունի մի այլ գրիչ գանգատվում է, որ իր աշքերը վաստ են տեսնում, նեղվում է ծխից, բժիշ և «կաթիլքից», ստիպված է ինքը վառել թուղթը և այդ պայմաններում գրել ձեռագիրը։ Նա գրում է։

«Գրեալ եղեւ վերացեալ մարմնով, կուրացեալ աչքով՝ ի ծխէն, ի բժէն, ի կարելէն, զող մարք եմ, զրունիրն եմ վառեր, երեք շահու գիայտն գներկարս մեր այս էր»։

(Լալայանի ցուցակ, էջ 748)։

Միթթար գրիշը գանգատվում է, որ դրելու թուղթը կոկ չէ, պարզկա օրեր են, չարդախը բարձր է և կրակ չունի։

«Տե՛ս թէ քանի աշխատեցայ,
Ես Միխրար գրիչ արա,
Թուղթը անկոկ ու գրիչ չկայ,
Աւարքն ցուրտ ու պարզկայ,
Չարդախս բարձր ու կրակ չկայ։

(Ալիշան, Հայապատում, էջ 520)։

Հիշատակարամներում մեծ տեղ է տրված ժամանակակից քաղաքական անց ու դարձերին։ Շատ գրիշեր իրենց ձեռագիրը գրել են փախուստի, գաղթականության ժամանակ։ Ձեռնարկում է գրիշը ձեռագրի գրելը, բայց հանկարծ հարձակվում է թշնամին և նա ստիպված է լինում մայր ձեռագիրը և նրանից արտադրվող նոր ձեռագրի մագաղաթը շալակած, թանաքամանը իր գոտուն կապած, տեղից տեղ փախչել և փախստականության պայմաններում ավարտել ձեռագիրը։ ՀՍՍՌ Մատենադարանի № 5707 ձեռագրի գրիշը պատճում է, որ թշնամին հարձակվել է Տաթեկ վանքի վրա, իրենք փախել են, ձեռագիրը գրել է փախստի ժամանակ։ Են ես ծանրաբնու մարմնով զթուղթ և զօրինակ, գրիչ և զթանաք է յուս իմ բարձեալի հետ զնայի, կարդայի։ Եւ որչափ ժամանէի... մատենան գրէի բազում չարչարանօք... զի ուր սկսաւ, անդ ոչ էառ զկատարումն» (թ. 415 թ.)։

1428 թվին ընդօրինակված մի ձեռագրի գրիչ պատճում է, որ ձեռագիրը գրել է փախստական վիճակում, դռնե դուռ ընկած ժամանակ։ «Այս երեք ամ է», գրում է գրիշը, «որ (Սքանդարը) յամէն տարի դայ. եւ աւար եւ գերի արար դաշնարչն մեր զվան եւ զմստան. եւ ապա առեալ զամուրն վան. եւ մեք փախստական եղաք ամենեքնան առհասպանի... ի օտար աշխարհ ըրջեցաք ի դռնէ դուռ...» (ՀՍՍՌ Մատեն. № 5568)։

Հովհաննես Երզնկացին իր 1313 թ. զրած մի հիշատակարամում հայտնում է, որ քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով իր ձեռագիրը ստիպված է եղել գրել երեք տարրեր տեղերում «Մասն ինչ ի մաս Տաթէի, ... մասն ինչ ի վան Եղբանի եւ մասն ինչ ի վան Եղուարդու» (ՀՍՍՌ Մատ. № 1198)։

1369 թ. զրած մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք... «Զոմէաք խաղողութիւն. կէս մի յայս քաղաքս գրելով, եւ կէս մի յայլ քաղաքս գրելով եւ այսպէս չրջագայերով աւարտեցաք» (Հ. Տաշյանի ցուցակ, էջ 718)։

Դրիշները վրդովմունքով են խոսում իրենց ժամանակի ծանր հարկապահանջության մասին, որի ընթացքում տեղացիները հաճախ հարկագրված են լինում վաճառքի հանել իրենց երեխաներին։ Այսպես, օրինակ, 1301 թ. զրած մի հիշատակարի պատճում է, որ ծանր հարկերի պատճառով տեղացի հայերը ստիպված են եղել վաճառքի հանել իրենց տղաներին ու աղջիկներին. «...զաղէտ եւ զողը տարակուսաց ու պատմեսցէ, զի խիստ եւ յանհնարին հարկապահանջութենէ ծախեալ լինին ուստերք եւ դստերք աշխարհիս մեր. եւ բազում գեղք աւեր եւ անհանգիստ» (ՀՍՍՌ Մատեն. № 380, թ. 311 թ.)։

1775 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ ձեռագրի տեղը հարկադրված է եղել վաճառել ձեռագիրը և այդ գրամով ազամել գերու-

թյունից եղբարը, աղջկան և հարսին. (տե՛ս ՀՍՍՌ Մատեն. № 1881):

Վարդան գրիչն իր 1583 թ. գրած հիշատակարանում հարկապահանջության ժանրանալու մասին հետեւյալն է գրում. «Եւ արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անխմաստ գրչի մեղաւոր Վարդանի ի դառն եւ ի նեղ ժամանակիս, յորում նեղինք ի հարկապահանջութենէ յանօրինաց, զի եւս քան զեւս սաստիցաւ բռնութիւն եւ նեղութիւն ի վերայ ազգիս Հայոց վասն ծովացեալ մեղաց մերոց» (ՀՍՍՌ Մատեն. № 6003, թ. 226 ա):

1464 թվին գրված մի հիշատակարանի գրիչ գանգատվում է, որ յոթը տարի է ինչ ժողովուրդը տառապում է ծանր հարկապահանջությունից: Նա գրում է. «իսանն է (7) տարի զաշմարհս սահման եւ երերուն պահեաց ի հարկապահանջութեան, ի տառապանս եւ ի չարչարանս... հայրք զորդիս ուրանային...» (ՀՍՍՌ Մատեն. № 3769):

Գրիչների վրա ծանր տպակորություն է թողել ժամանակի հարստահարությունը և ալան թարանը: Նրանք իրենց հիշատակարաններում նման փաստերը զարդույթով են արձանագրում:

1589 թ. գրած մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...ի մեջ դառ-

նութեան գրեցի զա դառն նու դժուար տանջանօք... բազում վշտօք հասայ ի վերջ գրիս» (ՀՍՍՌ Մատեն. № 1869):

1498 թ. գրված մի ձեռագրի հիշատակագիր հայոնում է, «որ սուլթանն ավերածություն է կատարել իրենց շրջանում և երեք տարվա հարկը մի տարում վերցրել. «Սուլթանն», գրում էր գրիչը, «էած աւերաշխարհիս. զերեք տարուն մալն երեք ամսուն էաու»: Վերջում գրիչն անիծում է սուլթանին. «Աստուած զիւր ումըն կարճ անե» (ՀՍՍՌ Մատեն. № 3599):

Մուրադ գրիչն իր 1684 թ. գրած հիշատակարանում խնդրում է անմեղազիր լինել գրչության վատության համար, որովհետեւ՝

«Հեծելաշարժ եղեւ մեր աշխարհիս, Սիրաս պաղ էր հետ տումարիս» (ՀՍՍՌ Մատեն. № 146):

Խորայել գրիչն իր հիշատակարանում պատմում է թշնամու բռնությունները տեղացիների նկատմամբ և վայրում. «...Գերեցին, թալաննեցին... հայր զորդի կանչչը, իսկ մայր՝ ցղուատըն. վայ եւ եղուկ ազգիս Հայոց: Ի թիւս Հայոց Ռիթ (1580). Երանի մեռելին, վայ կենդանոյն» (ՀՍՍՌ Մատեն. 4173, թերթ 95 ա):

(Շաբաւմբակելի)

Պրոֆ. գոկս, Ա. Շ. Ա. Բ. Բ. Ա. Մ. Յ. Ա. Ա. Մ. Յ.

(Ա. Էջմիածնի Գերագույն հոգեու Խորհրդի գիտ. քարտուղար)